

# ՏԱՍ ՀԱՐՑ և ՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐԳԱՐԵ ՄՈՒՀԱՄՄԵԴԻ ՄԱՍԻՆ

[ Հայերեն - Armenian – أرمني ]

**ՀԵՂ. Իբրահիմ Հ. Մալաբարի**

**Թարգմանությունը:**  
**EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)**  
& Աննա Ռ. Հակոբ  
**Ստուգող հանձնաժողով:**  
Աբու Առամ

2015 - 1436

**IslamHouse**.com

﴿ عشرة أسئلة وأجوبة حول النبي محمد

صلى الله عليه وسلم ﴾

باللغة الأرمينية

إبراهيم ماليباري

ترجمة:

المركز الأوروبي للدراسات الإسلامية

& أنا ر. يعقوب

مراجعة: أبو آرام

2015 - 1436

IslamHouse.com

**ՏԱՍ ՀԱՐՑ և ՊԱՏԱՄԻԱՆ ՄԱՐԳԱՐԵ  
ՄՈՒՀԱՄՄԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ԻՆՉՈՒ՞ ՄՈՒՀԱՄՄԵՐԸ ԱՄՈՒՄՆԱՑԵԼ Է ՄԻ ՔԱՆԻ  
ԿԱՆԱՆՑ ՀԵՏ**

**ԱՐԴՅՈ՞Ք ՆԱ ԱՐԵԼ Է ԱՅՂ ՄԵՌԱԿԱՆ ՀԱՃՈՒՅՔԻ  
ՀԱՄԱՐ**

Ամեն անգամ երբ հնչում է Մարգարե Մուհամմեդի անունը, մարդկանց մտքերում պատկերվում է բազմակիև տղամարդ: Մահմեդականների համար, նրա բազմակի ամուսնությունը Իսլամի վրա ունի հսկայական հետևանքներ և իմաստ ինչպես նաև աշխարհի պատմության երկարաձգում: Անօգուտ է ասել, որ խնդիրը մնաց վիճելի և որպես այդպիսին, խնդրի ցանկացած ուսումնասիրությունը պահանջում է օբյեկտիվ մոտեցում: Հետևաբար, մենք կփորձենք լուծել այս խնդիրը լինելով այնքան օբյեկտիվ, որքան որ հնարավոր է:

Մարգարե Մուհամմեդի նպատակն էր համոզել, որ Աստծո Մարգարեյի այս առաքելությունը լրացրել և հաստատել է հասարակարգ, որը հիմնված է Աստծո պատվիրանների,այլ ոչ թե իր վրա: Նպատակին հասնելու համար նա արեց ամենը,որքան որ մարդկայնորեն հնարավոր է. նա հարաբերություններ հաստատեց Արաբիայի տարբեր ցեղերի հետ,

Խաղաղության պայմանագրեր կնքեց իր երդվյալ թշնամիների հետ և հարաբերություններ պահպանեց տարբեր ցեղերի ղեկավարների, ժողովուրդների և կրոնների հետ: Ընդհանուր առմամբ, նրա ամուսնությունները մեկ ուղղի էր բարելավելու, տարբեր ազդեցիկ ցեղերի հետ հարաբերությունները:

Եթե որևէ մեկը ցանկանում է այս տեսանկյունից դիտել Մարգարեյի ամուսնությունները, ապա պարզ են դառնում նրա դրդապատճառները: Շատ պարզ և սխալ կլինի դիտել նրա ամուսնությունները որպես ուղղակի կրթի ավարտ :

Այժմ, եկեք, քննենք նրա յուրաքանչյուր ամուսնության հանգամանքը, տեսնելու, արդյոք այդ է իրավիճակը: Ի սկզբանե, հույժ կարևոր է նշել, որ իր կանանցից, բացառությամբ մեկի, բոլոր տասնմեկն էլ այրի էին կամ ամուսնալուծված: Մեծամասնությունը փաստացի այրի էին :

Նա առաջին անգամ կնության առավ Խաղիջա անունով մի կնոջ, ով երկու անգամ արդեն ամուսնացած էր : Խաղիջան քառասուն տարեկան էր իսկ նա քսանհինգ: Խաղիջան առաջին կինն էր, ով ընդունեց Իսլամ: Խաղիջան մեծ մխիթարություն էր Մարգարեյին ամբողջ կյանքի ընթացքում և Մարգարեն շարունակում էր հիշել նրան իր հետագա տարիներին, որպես իր սիրելի կնոջ: Նա հավատարմորեն մնաց Խաղիջայի հետ քսանհինգ

տարի, մինչ նրա մահը, որի ժամանակ Մարգարեն հիսուն տարեկան էր, իսկ Խադիջան վաթսունհինգ:

Եթե նա առաջնորդվեր կրքի դրդմամբ, ինչպես նրան մեղադրում էին թշնամիները, նա կարող էր ամուսնանալ մի շատ անգամներ գեղեցիկ և երիտասարդ կանանց հետ, մի հասարակարգում, որտեղ մի քանի կին ունենալը նորմ էր, ոչ մի պատճառ չէր լինի հավատարիմ լինել տարեց կնոջ մինչ հիսուն տարեկան: Այս միակ փաստը կարող էր էական լինել ամբողջովին ժխտելու այս հարցի դեմ արված մեղադրանքները: Ամեն դեպքում, նրա բոլոր ամուսնությունների քննումը, ինչպես մենք կտեսնենք, կարող է այս հարցը հանգիստ թողնել:

Խադիջայի մահից հետո, նա կնության առավ մեկ այլ այրու, Մավդային, ով վաթսունհինգ տարեկան էր : Նա և նրա նախկին ամուսինը, Մակրան, արտագաղթել էին Եթովպիայից, փախչելով Մեքքացիների ճնշումներից և հետապնդումներից: Մեքքա վերադառնալու ճանապարհին նրա ամուսինը մահացավ: Տեսնելով նրա դժվար իրավիճակը, Մարգարեն ամուսնացավ նրա հետ :

Այնուհետ նա կնության առավ Աիշայի, իր ընկեր և ուղեկցորդ Աբու Բաքրի դստերը: Առաջին անգամ Աիշան նշանվել էր Ջեբիր իբն Մութիմի հետ հինգ տարեկան հասակում: Այդ ժամանակաշրջանում մանկահասակների ամուսնությունները ակնհայտ նորմ

էր : Մարգարեյի կանանցից նա միակ կույսն էր և միակը, ով ծնվել էր մահմեդական ընտանիքում :

Այս ամուսնությամբ Մարգարեն նպատակ ուներ ամրացնել Աբու Բաքրի հետ եղբայրական կապերը, ով Մեքքացիների դեմ իր հիմնական պաշտպանն էր: Երկրորդ, Աիշան իր տոհմաձառով հայտնի էր որպես պատվելի և կիրթ: Մարգարեն գիտեր, որ նա չափազանց օգտակար կլիներ իր ժողովրդին (ումմային), փոխանցելու կարևոր գիտելիքներ իր կյանքից առանձնապես որոնք վերաբերում էին ընտանեկան և անձնական խնդիրներին, որոնց մյուսները անհաղորդ էին: Իրոք, Մարգարեն իր համայնքին խորհուրդ տվեց սովորել իր կրոնի գիտելիքների կեսը Աիշայից: Մարգարեյի կանխատեսությունը ապացուցեց իրենը և ուստի նա դարձավ Մարգարեական իմաստության և գիտելիքների հիմնական աղբյուրը :

Նա նույնպես կնության առավ մեկ այլ այրի, Հաֆգային, ով Ումար Իբն Խատտաբի դուստրն էր, ով նրա հաջորդ ամենամոտ ուղեկցորդն էր: Նրա ամուսինը Քունեյսը, նահատակվել էր Բադր ճակատամարտի ժամանակ: Նա պարտավորվածություն էր զգում Ումարի նկատմամբ, ում Իսլամը ընդունելը լուրջ խթան հանդիսացավ Մեքքայի մահմեդականների համար, ընդդեմ իրենց թշնամիների :

Ձեյնաբը, Խուզայմայի դուստրը, մեկ այլ այրի էր, ում կնության առավ Մարգարեն: Նա ամուսնացած էր Ուբայդա իբն ալ- Հարիսի հետ, ով նահատակվեց Բադրի ճակատամարտում: Նա վաթսուն տարեկան էր, երբ Մարգարեն ամուսնացավ նրա հետ: Նա հայտնի էր որպես «Հարստահարվածների Մայր»: Ամեն դեպքում նա մահկանացուն կնքեց ամուսնությունից երկու կամ երեք ամիս անց:

Նա կնության առավ մեկ այլ այրի, Ում Սալամային: Նրա նախորդ ամուսինը, Աբու Սալաման, նահատակվել էր Ուհուդի ճակատամարտի ժամանակ, թողնելով չորս որբ երեխա: Ումն Սալաման այդ ժամանակ հղի էր և սարսափելի տխուր և ճնշված էր : Հարկ չկա ասելու, որ նա մեծ աջակցության կարիք ուներ : Երեխայի լույս աշխարհ գալուց հետո, Ումարը առաջարկեց Մարգարեյին ամուսնանալ նրա հետ : Կարեկցանքից և գթասրտությունից բացի արդյո՞ք կարող էր լինել մեկ այլ նպատակ, ըստ որի Մարգարեն կարող էր ամուսնանալ հիսունչորս տարեկան այրու հետ, ով ուներ չորս որբ երեխա: Այս ամուսնությունը ուներ նաև մեկ այլ կարևոր փաստ. Ում Սալաման Բանի Մաքհոմ գեղից էր, որը այդ ժամանակ Իսլամի հիմնական թշնամիներից էր, Աբու Ջահլը և Խալիդ իբն Ուալիդը: Չնայած Աբու Ջահլը երբեք չփոխվեց, Խալիդը ավելի ուշ ընդունեց Իսլամ և դարձավ հոյակապ զինվորական հրամանատար: Ազդեցիկ և հզոր ցեղերը

դեպի Իսլամ բերելը, Մարգարեյի ամուսնությունների առաքինի նպատակներից էր:

Նա կնության առավ մեկ այլ ամուսնալուծված կնոջ, Ջեյնաբին, ով Ջահշի դուստրն էր: Նա ամուսնացած էր Ջայդ իբն Հարիթին, Մարգարեյի ազատած ստրուկի հետ : Ջեյնաբը Մարգարեյի զարմուհին էր, հորաքրոջ դուստրը: Ջեյդը ամուսնալուծվեց և Մարգարեն կնության առավ նրան, երբ նա երեսուներե տարեկան էր: Ջեյնաբի հետ ամուսնության նպատակն էր ընդգծելու հին արաբների սովորության անվավերությունը ընդունելու որդեգրված զավակներին որպես իրական: Ինչպես նշվել է Ղուրանում, ամուսնությունը աստվածայնորեն արտոնված էր. **«Երբ Ջեյդը հասավ նրա հետ իր միության ավարտին, Մենք տվեցինք նրան քեզ կնության....»** ( 33:37)

Ում Հաբիբան մեկ այլ այրի էր, ում կնության առավ Մարգարեն : Նա Աբու Սուֆյանի դուստրն էր, ով Իսլամի ռիսերիմ թշնամի էր մինչ իր ընդունելը : Ի սկզբանե նա ամուսնացած էր Ուբայդալլահի հետ, ով Մարգարեյի ուղեկցորդն էր: Երկուսն էլ արտագաղթեցին Եթովպիա, փախչելով Մեքքացիների կեղեքումներից և հետապնդումներից: Ուբայդալլահ հետագայում դարձավ քրիստոնյա և ավելի ուշ այնտեղ կնքեց իր մահկանացուն: Հաշվի առնելով նրա ծանր դրությունը, որ նրա հայրը Իսլամի թշնամին էր և ամուսինը դասալիք, Մարգարեն պատվիրակ ուղարկեց Եթովպիայի թագավոր, Նեգուսին, խնդրելով

կազմակերպել նրանց ամուսնությունը : Թագավորը կազմակերպեց ամուսնությունը և նա ամուսնացավ Մարգարեյի հետ, երբ երեսունվեց կամ երեսունյոթ տարեկան էր: Ինչպես շատ ամուսնություններ, Ում Հաբիբայի հետ ամուսնության արդյունք եղավ բերել Քուրեյշ, Բանու Աբդ ալ- Շեմս մեծ ցեղերը դեպի Իսլամ:

Նա կնության առավ մեկ այլ այրու, Ջուվայրայի: Նրա և հայրը, և ամուսինը Իսլամի ոխերիմ թշնամիներ էին: Մեքքացիների դրդմամբ, առաջինը ծրագրավորել էր հարձակում գործել Մեդինա: Այդ պատճառով մահմեդականների բանակը արշավեց նրա հոր ցեղի վրա: Արդյունքում, Մարգարեյի ձեռքով նրանք պարտություն կրեցին և Ջուվայրայի ամուսինը մահացավ: Հակամարտությունից հետո, մահմեդականները շատ բանտարկյալներ գերեվարեցին, որոնցից մեկը Ջուվայրան էր : Ջուվայրայի հայրը փրկագին առաջարկեց նրա ազատության համար : Ջուվայրան խնդրեց ծառայել Մարգարեյին և նա կնության առավ նրան: Ամուսնության արդյունքում նրա ցեղի բոլոր պատերազմական բանտարկյալները ազատ արձակվեցին: Կրկին անգամ այս ամուսնությունը առաջնորդեց խաղաղության և ընկերական հարաբերությունների հաստատման:

Նա նույնպես կնության առավ Սուֆեյա անունով մի կնոջ, ով նույնպես այրի էր: Նրա երկրորդ ամուսնը նահատակվել էր Խայբար ճակատամարտի ժամանակ:

Նրա հայրը հայտնի Հրեա ցեղի, Բանու Նազիրի առաջնորդն էր: Նա սպանվեց Խայբար ճակատամարտում և այսպիսով Սուֆեյային գերության վերցրեցին : Ի վերջո նրան ազատեցին և Մարգարեն կնության առավ նրան : Ոմանք բողոքում էին, որ նա համակրում էր Հրեաներին: Նրա պատասխանն էր, որ նրանք իր բարեկամներն են և Մարգարեն պաշտպանեց նրա դիրքորոշումը : Նա ասաց նրան պատասխանել հետևյալ կերպ. «Իմ հայրը Աարուն է և իմ հորեղբայրը Մովսեսը»: Այս ամուսնությունը առաջնորդեց Մեդինայի մահմեդականների և հրեաների սերտ կապերի:

Նրա վերջնական ամուսնությունը մեկ այլ ամուսնալուծված կնոջ, Մայմունայի հետ էր: Նա ամուսնացած էր երկու անգամ և տարիքով մեծ էր : Նա ամուսնացավ Մարգարեյի հետ, երբ հիսունյոթ տարեկան էր: Ամուսնության նպատակն էր բերել նրա ցեղը, Հալալիյեն դեպի Իսլամ: Այդ առաջարկությունը եկավ Մարգարեյի հորեղբոր կողմից: Եվ այդ իրականացավ, նրանց ամուսնությունից հետո, նրանք բազմությամբ ընդունեցին Իսլամ:

Վերոհիշյալ տեղեկություններից, մենք կարող ենք տեսնել, որ Մարգարեյի ամուսնությունները տեղի չէին ունենում ըստ իր կրքի և ցանկությունների, այլ ըստ Աստծո որոշման: Վերջին ամուսնությունից հետո (Մայմունայի հետ), Նա պատվիրեց Իր Մարգարեյին այլևս չամուսնանալ (Ղուրան 33:52), որովհետև այդ

Ժամանակ արդեն ամուսնությունների միջոցով նպատակները արդեն իրագործվել էին, քանի որ Մարգարեական առաքելությունը մոտենում էր ավարտին:

Սակայն այս ամենը չի նշանակում, որ Մարգարեն հետաքրքրված չէր սեռական հարաբերություններով: Նա գրավված էր գեղեցկությամբ և սեռական հարաբերություններով և արտահայտում էր այդ: Նա ասաց. «օճանելիքը և կանայք հաճելի են ինձ: Ամեն դեպքում, իմ աչքի ուրախությունը աղոթքի մեջ է:» Նա նույնպես ասաց. «Ես իմ կատարյալ ինքնակառավարման մեջ եմ:» Փաստորեն, հայցքը նրա կյանքին, ցույց է տալիս, որ նա չափավոր էր մոտենում մարդկային կյանքի տարբեր ասպեկտներին: Լինի դա սնվելը, ըմպելը, կամ կանանց հետ ժամանակ անց կացնելը, երբեք չափից դուրս անձնատուր չլինելը որևէ մեկին: Ըստ շատ արևմտյան հեղինակների նրա տարասեռ և սանձարձակ կերպարը, որը հիմնականում հիմնված էր բազմակնության փաստի վրա հեռու է իրականությունից և պատմական փաստերից, ինչպես արդեն նշվել է: Իրոք, նրա ամուսնությունները ունեին հասարակական շարժառիթ և բարձր նպատակ, քան ուղղակի սեռական հաճույք:

Պատշաճ կլինի այստեղ մեջբերել Արևմտյան կին գիտնական Քարեն Արմսթրոնգին, Մուհամմեդ. Մեր Ժամանակների Մարգարեն՝ աշխատության հեղինակին, կապված Մարգարեյի ամուսնությունների

և Իսլամում բազմակնության խնդրի հետ. «Ղուրանական բազմակնությունը հասարակական օրենսդրության մի մաս է: Այն չէր նախատեսվել գոհացնել արական սեռական ախորժակը, այլ ուղղել անարդարությունը, ընդդեմ այրիների, որբերի և այլ իզական կախյալների, ովքեր առավել խոցելի էին: Առավել հաճախ, անբարեխիղճ մարդիկ ճանկում են ամենը և թողնում են ընտանիքի ավելի թույլ անդամներին առանց ոչնչի.... Բազմակնությունը սահմանվել է հաստատելու, որ անպաշտպան կանայք քաղաքավարությամբ կամուսնանան և կվերացնեն հին, չամբացված, անպատասխանատու կապերը: Տղամարդիկ կարող են ունենալ միայն չորս կին և պետք է վերաբերեն նրանց հավասարապես: Անարդարացիորեն ամբարիշտ արարք էր կլանել նրանց ունեցվածքը.... Ղուրանը փորձում է տալ կնոջը օրինական կարգավիճակ, որը շատ արևմտյան կանայք չէին կարող վայելել մինչ տասնիններորդ դարը: Կանանց ազատագրումը Մարգարեյի սրտի սիրելի ծրագիրն էր...»

## ԱՐՁԱՆՔ ՄԱՐԳԱՐԵ ՄՈՒՀԱՄՍԵՂԸ ՏԱՐԱԾԵՑ ԻՍԼԱՄԸ ՄՐԻ ՄԻՋՈՑՈՎ և ՍՏԻՊԵՑ ՄԱՐԴԿԱՆՑ ԸՆԴՈՒՆԵԼ ԻՐ ԿՐՈՆԸ

Տարածված հավատալիք է, որ Իսլամը տարածվել է սրի միջոցով: Գոյություն ունեն երկու հիմնական պատճառներ, որոնք ցույց են տալիս, որ փաստորեն այս այդպես չէ:

Առաջին հերթին, Գթասարտության Մարգարեն, Մարգարե Մուհամմեդը հայտնեց, որ նա հավատարիմ է Աստծո պատվիրաններին: Եվ դեմ, ստիպելու մարդկանց ընդունել Իսլամ, Աստված հատակորեն արգելել է ստիպել դավանափախությունը. «**Գոյություն չունի պարտադրանք հավատքի մեջ:**» (Ղուրան 2:256)

Կա հետաքրքիր պատմություն կապված այս տարբերակի հետ: Մի մարդ, ով Մարգարեյի ուղեկցորդներից էր, ուներ երկու որդի, ովքեր մինչ Իսլամի հայտնվելը, ընդունել էին Քրիստոնեություն: Երկու որդիները եկան Մեդինա Քրիստոնյաների խմբի հետ և որ այդ ժամանակ իրենց հայրը պնդեց որ նրանք երկուսն էլ պետք է դառնան մահմեդականներ: Ամեն դեպքում նրանք մերժեցին իրենց հոր խնդրանքը և խնդիրը բերեցին Մարգարեյին: Հայրը հարցրեց, «Օվ, Ալլահի Մարգարե, ինչպե՞ս կարող է իմ մի մասը մտնել դժոխք, մինչ դեռ ես տեսնում եմ:» Սրանից հետո էր, որ Աստված լուսաբանեց վերոհիշյալ տարբերակը, արգելելով որևէ պարտադրանք կրոնի մեջ: Ուստի,

տղամարդու երկու որդիները մնացին Քրիստոնյաներ: Գթասրտության Մարգարեն չստիպեց նրանց դառնալ մահմեդականներ, ըստ իրենց հոր ցանկության :

Մեկ այլ տարբերակում Ղուրանը ասաց. «Մակայն, ձեր Տերն է այդպես ցանկացել, բոլորը, ովքեր երկրի վրա են, կարող են հավատալ քո առաքելությանը, նրանցից յուրաքանչյուրը և նրանք բոլորը միասին, արդյո՞ք դու կլինես մեկը, ով կպարտադրի մարդկանց, որ նրանք դառնան հավատացյալներ, օվ Մարգարե:» (10:99) Բոլորը ընդունեցին, նույնիսկ նրանք, ովքեր մեղադրեցին Մարգարեյին ստիպողական գրույցների մեջ, որ Մարգարեն աստվածավախ անձ էր, ով հնազանդվեց Նրան ամբողջ սրտով և ամեն ինչում: Ինչպե՞ս ապա, նա կարող էր ոտնահարել այս որոշակի աստվածային պատվիրանները:

Նույնիսկ գոյություն ունեն իսկապես գրառված դրվագներ, որոնց մեջ Մարգարեն խորհուրդ տվեց որոշ անհատների չընդունել Իսլամ որոշակի ժամանակ, իրենց ապահովության համար: Մի դրվագում մեկ մարդ Ամր իբն Աբասա Ասսուլամին եկավ Մեքքա հեռու տեղից, որպեսզի ընդունի Իսլամ: Այդ այն ժամանակ էր, երբ Մեքքայում մահմեդականներին հետապնդում էին և բավական դժվար էր գտնել Մարգարեյին: Ամեն դեպքում Ամրը փորձեց գտնել Մարգարեյին և նա արտահայտեց իր ցանկությունը ընդունել Իսլամ: Մարգարեն, ամեն դեպքում, ասաց նրան, որ նա չպետք է ընդունի Իսլամ այդ ժամանակ, քանի որ Մարգարեյի և

նրա ժողովրդի միջև իրավիճակը վտանգավոր էր : Մարգարեն այնուհետ, խորհուրդ տվեց Ամրին վերադառնալ իր ընտանիք, մինչ Մարգարեյի հաղթանակը չդառնա ակնհայտ: Մոտ 7-8 տարի անցավ, մինչ Ամրը կրկին հանդիպեց Մարգարեյին, ընդունելու Իսլամ: Անկասկած, եթե Մարգարեն ցանկանար որ մարդիկ միայն ընդունեն Իսլամ, նա խորհուրդ չէր տա Ամրին վերադառնալ ընտանիք, հաշվի առնելով սպառնացող վտանգը:

Ճշմարիտ է, որ Մարգարեն անչափ մեծ ցանկություն ուներ հաղորդել Աստծո ուղերձը և առաջնորդել մարդկանց փրկության: Ղուրանը նկարագրում է այս մեծ ցանկությունը. « **Արդյո՞ք դու, թերևս ցանկանում ես մահու չափ տանջել քեզ վշտանալով նրանց համար, եթե նրանք կամովի չեն հավատում այս ուղերձին:**» (18:6) Մակայն, այս մեծ ցանկությունը երբեք չէր հուշել նրան դավանափոխ անել նույնիսկ մեկ անձ, հակառակ կամքի:

Երկրորդ, գոյություն չունի որևէ պատմական վկայություն, որը ասում է որ Մարգարե Մուհամմեդը հակառակ է գործել այն սկզբունքին, որ չպետք է լինի որևէ պարտադրանք կրոնի մեջ:

Գոյություն չունի այսպիսի դեպքի որևէ գրաված օրինակ, Մարգարեյի մանրամասն փաստագրված կյանքից: Չնայած, որոշ վաղ շրջանի Արևմտյան պատմաբաններ առաջ են քաշում այսպիսի

հայտարարություններ, ավելի ուշ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խոսակցությունները սրի տեսանկյունից հանկարծակի չեն տեղի ունեցել, այլ, երբ մարդիկ ապրում էին մահմեդականների կողքին աստիճանաբար և անկեղծորեն կամովի ընդունում էին Իսլամ: Իրոք, այս նշել է Արևելագետ Ջորջ Մեյլը. «Ով ասում է, որ Իսլամը տարածվել է սրի ուժով, նրա խոսքը անհիմն պնդում է, որովհետև սուրը նույնիսկ չի նշվել շատ երկրներում և Իսլամը տարածվել է այնտեղ:»

Մահաթմա Գանդին, Հնդկաստանի ժողովրդի հայրը մեկ անգամ ասաց. «Ես կրկին անգամ ավելի քան համոզվեցի, որ սուր չէր, որը օգնեց Իսլամին տեղ գտնել մերօրյա կյանքի համակարգում: Այն հակիճ պարզությունն էր, Մարգարեյի բացարձակ ինքնակառավարումը, նրա խոստումների բժախնդրությունը, նրա կատարյալ հավատարմությունը իր ընկերներին և հետևորդներին, նրա քաջությունը, անվախությունը, կատարյալ հավատքը Աստծոն և իր իսկ ուղերձը:»

Հայտնի ֆրանսիացի պատմաբան Գուստավ Լոբոն, իր Արաբ Քաղաքակրթությունը՝ աշխատության մեջ ասում է. «Իսլամի տարածման գործում ուժը չէր գործոն: Պատճառն այն է, որ արաբները մարդկանց թույլ են տվել, որ նրանք ազատ հաղթահարեն իրենց իսկ կրոնի գործածումը:»

Մեկ այլ եվրոպացի գրող, Թոմաս ֆարլայըր ասաց. «Մարգարեյին մեղադրելը, որ նա վստահել է սրին, որպեսզի մարդիկ պատասխանեն նրա քարոզներին, անհասկանալի անհեթեթություն է:»

Պատմությունը, տրամաբանությունը, օբյեկտիվությունը և գիտական ուսումնասիրությունները, բոլորը ժխտում են այն պատկերացումը, որ Մարգարե Մուհամմեդը պարտադրել է իր կրոնը անցանկալի զանգվածներին: Իսլամի ճշմարտության կամավոր ընդունումը և լիարժեք համոզվածություն էր, որ պատճառ հանդիսացավ շատ երկրներում զանգվածային խոսակցությունների: Ինդոնեզիան, Մալազիան, Չինաստանը և որոշ Հարավ Ասիական Երկրներ փաստում են այս իրականության օրինակները : Մենք կարող ենք տեսնել դրա նշույլները մեր օրերում: Չնայած ավելի քիչ դրամատիկ ուղղով, Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում, որտեղ Իսլամը ամենաարագ տարածվող կրոնն էր :

**ԱՐԴՅՈ՞Ք ՄՈՒՀԱՄՄԵՂՆ Է ԳՐԵԼ ՂՈՒՐԱՆԸ:  
ԱՐԴՅՈ՞Ք ՆԱ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻՑ ԶԲԱՂՎԵԼ Է  
ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՄԲ**

Մարգարե Մուհամմեդի դեմ արված մեղադրանքները, որ նա է գրել Ղուրանը, Արևմուտքում բավական լայն տարածում ունի: Արևմտյան հեղինակներից նույնիսկ

նրանք, ովքեր համակրում են Իսլամը, չեն կարող ընդունել, որ Ղուրանը հայտնություն է և նրա հեղինակը ինքը Աստվածն է: Արևմտյան գրականության մեջ գոյություն ունի երկար և խոր արմատներով սովորույթ, որը դիտում է Ղուրանը որպես Մարգարեյի աշխատություն : Ուստի, մենք կդիտենք այս խնդիրը, քավական մանրակրկիտ, հաշվի առնելով լավ փաստարկված պատմական փաստերը, տրամաբանությունը, ինչպես նաև Մարգարեյի անհատականության, կյանքի, աշխատանքի նկատմամբ ունեցած հարգանքը:

Մարգարե Մուհամմեդը, թերևս պատմության մեջ ամենափաստագրված հնագույն անձնավորությունն է: Այս փաստը մեզ հնարավորություն է տալիս ավելի մոտիկից քննել մեղադրանքը, որ նա ինքն է գրել Ղուրանը: Խնդիրը հանդիսանում է հատորների թեմա, քանի որ գիտնականները մանրամասնորեն քննարկել են հարյուրավոր ամուր վկայություններ, որոնք հաստատում են Ղուրանի Աստվածային ծագումը : Հաշվի առնելով այս գրքույկի ծավալը, մենք կնշենք միայն մի քանիսը:

Առաջին հերթին, Մեքքայի վաղ արաբներին հայտնի էր, որ Մարգարե Մուհամմեդը չէր կարող կարդալ և գրել և կրթված չէր: Ղուրանը ինքնին ասում է, որ Մարգարեն անուսում էր, նշելով այն փաստը, որ նա չէր կարող կարդալ և գրել: Մեքքայի համայնքում ոչ ոք չէր կարող փորձել ժխտել Ղուրանի այս պնդումը. «**Ապա**

**հավատացեք Աստծոն և Նրա Մարգարեյին, անուսում Առաքյալին, ով հավատաց Աստծոն և Նրա խոսքերին և հետևեց նրան, այնպես որ դուք կարողանաք գտնել ուղղորդություն :» (7:158)**

Ինչպես նշվել է նրա կենսագրականի մեջ, երբ Գաբրիել հրեշտակը առաջին անգամ մոտեցավ Մարգարեյին, երբ նա քառասուն տարեկան էր և լուսաբանեց նրան Ղուրանի առաջին տարբերակը ասելով “Կարդա”, Մարգարեյի պատասխանը եղավ, որ նա ի վիճակի չէ կարդալ: Ուստի, նույնիսկ հայտնության սկզբում, Մարգարեն չէր կարող ստեղծագործել գիրք: Իրոք, ինչպես նշում է Ղուրանը, Մարգարեյի անուսում լինելը, ինքնին աստվածային իմաստության խնդիր էր. «**Երբեք դու չես արտասանել Գիր մինչ այս, Ղուրանը, օվ Մարգարե: Ոչ էլ դու արտագրել ես մեկը, քո աջ ձեռքով: Քանի որ դրանից հետո կեղծիքի նախահայրերը կարող էին պատճառներ ունենալ կասկածելու, հայտնությանը :» (29:48)**

Երկրորդ, Մարգարե Մուհամմեդի կյանքի շատ տարբեր դեպքերում, երբ խնդիր էր ծագում, նա ի վիճակի չէր լինում գտնել լուծում, մինչ չէր իջնում հայտնություն Աստծոց: Այսպիսի շատ դեպքերում, հաճախ պատասխանը ուշանում էր, թողնելով Մարգարեյին անհանգստության մեջ: Եթե Մարգարեն հնարեր պատասխանները, ապա ինչու՞ նա պետք է սպասեր հայտնության: Ահա մի քանի օրինակներ.

- Մեկ անգամ, մարդկանց մի խումբ, Մարգարեյի կնոջը, Աիշային մեղադրեցին անպարկեշտության մեջ: Ջրպարտողների մեղադրանքները ցնցեցին Մեդինա համայնքը և պատճառ հանդիսացան նրանից Մարգարեյի ժամանակավոր հեռացմանը: Այս բավականին ծանր փորձության ժամանակ նա չգիտեր ինչ անել: Վերջապես, լուսաբանվեցին տարբերակներ, որոնք հաստատեցին Աիշայի անմեղությունը և սաստեցին նրանց, ովքեր կեղծ մեղաբող էին նրան:
- Մեկ անգամ Քուրեյշ ցեղի ղեկավարները մի քանի հարց տվեցին Մարգարեյին, փորձելու և տեսնելու, թե արդյոք նա իրոք Աստծո Մարգարեն է :Նրանք հարցրեցին նրան Յոթ Քնածների, Դուլ Քարնեյնի, հին հայտնի թագավորի, ոգու բնույթի և այլնի մասին: Անցան շաբաթներ և Մարգարեն չէր կարող տալ որևէ պատասխան, որովհետև նա այդ ժամանակ չգիտեր նրանցից որևէ մեկի մասին: Որպես հետաձգման արդյունք, Քուրեյշները մեղադրեցին Մարգարեյին ստի մեջ: Վերջապես, Մարգարեն ստացավ Ղուրանի մեկ ամբողջ գլխի հայտնություն, որը կոչվում էր Քարայր Գլուխ 18, ինչպես նաև այլ տարբերակներ, որոնք պատասխանում էին նրանց տրված բոլոր հարցերին:

- Իսլամի վաղ օրերում, մահմեդականները սովոր էին աղոթքի ժամանակ նայել Երուսաղեմի ուղղությամբ: Մարգարեն ցանկացավ փոխել Երուսաղեմի ուղղությունը դեպի Մեքքա: Սակայն, նա չհրահրեց փոփոխությունը ինքն իրեն, փոխարենը նա սպասեց իր Տիրոջ հրամանին, բարձրացնելով իր գլուխը դեպի երկինքներ սպասումով: Ղուրանը ասում է.՝ Մենք տեսել ենք քեզ, օվ Մարգարե, հաճախ ուղղված ձեր դեմքը դեպի երկինքը...՝ Ղուրան 2:144: Դրանից հետո Աստծո հրամանը եկավ և մահմեդականները անմիջապես ուղղեցին իրենց երեսները Մեքքայի ուղղությամբ, շրջվելով հյուսիսից դեպի հարավ:

Այս բոլոր և նմանատիպ դրվագներում, Մարգարեն չէր գործում, մինչ նրան չէր իջնում հայտնությունը որոշակի պատասխանով կամ հրամանով: Այս էր իրավիճակը, նույնիսկ իսկ այն դեպքում, երբ ուշացման պատճառով նրան կշտամբում և մեղադրում էին կեղծ Մարգարե լինելու մեջ: Եթե Ղուրանը լիներ Մարգարեյից, անշուշտ, նա կարող էր լուսաբանել տարբերակները ավելի վաղ: Այս ցույց է տալիս, որ Ղուրանը Աստծո հայտնությունն է, այլ ոչ թե Մուհամմեդի երևակայությունը:

Երրորդ, արաբները և մահմեդական և ոչ մահմեդական, վկայել էին Ղուրանի բարձր տրամաչափությունը և գրական առեղծվածը:

- Ումար իբն Խատաբը սովորաբար դատում էր Մեքքայում տեղի ունեցող պոեզիայի տոնակատարությունը: Արաբերեն լեզվի նրա իմացության վարպետությունը հոյակապ էր: Այնուհանդերձ, երբ նա լսեց Ղուրանի մեկ հատված, նա կախարդվեց և այդ իսկ պատճառով ընդունեց Իսլամ: Ինչպե՞ս կարող էր Մարգարեն ներկայացնել այսպիսի գրական գլուխգործոց քառասուն տարեկան հասակում, երբ նա երբեք մինչ այդ չէր ցուցաբերել այդպիսի տաղանդ:
- Նմանապես, շատ ուրիշներ, ինչպիսիք էին Աթ-Թուֆայլ իբն Ամր ալ-Դաուսին, Ութբահ իբն Ռաբիհան և այլոք, ովքեր նույն զգացումները ունեյին, երբ լսում էին Ղուրանի հատվածներ: Նրանք կրկնում էին. «Ես այնպիսի խոսքեր եմ լսել, որ նախկինում երբեք չեմ լսել: Հանուն Աստծո, այն պոեզիա չէ, ոչ էլ կախարդանք, ոչ էլ գուշակություն: » Հաճախ, այս նրանց առաջին տպավորությունն էր: Այս ապացուցում է, որ Ղուրանը Մարգարեյի տաղանդից և հանճարից վեր էր, քանի որ նրա ծագումը այլ էր, քան Մարգարե Մուհամմեդը:

Չորրորդ, նշմարելի տարբերություններ գոյություն ունեն Մարգարեյի ասվածների և Ղուրանի տարբերակների միջև: Մարգարեյի հաղորդածները գրառվել են հատորներում և կոչվել են հադիթներ,

որոնք ավելի ծավալուն են քան Ղուրանը: Երբ նա խոսում էր, նրա խոսքերը չէին ուղեկցվում արտասովոր արտահայտություններով, սակայն, երբ նա ստանում էր հայտնություն, հաճախ ունենում էր տարօրինակ զգացողություններ: Երբ տարբերակները հայտնվում էին նրան, երբեմն նա քրտնում էր նույնիսկ ցուրտ օրերին, նրա դեմքը կարմրում էր, մարմինը ծանրանում և այլն: Արդյո՞ք նա խաղում էր :Իհարկե, ոչ: Ինչպե՞ս նա կարող էր ապրել այսպիսի ձևական և բարդ կյանք քսաներեք տարի: Իրոք, այս է հադիթի և Ղուրանի տարբերությունը :Ինչ վերաբերում է Ղուրանին, նա ստանում էր այն Աստծոց, բանավոր հայտնությամբ, իսկ հադիթները նրա իսկ խոսքերն էին :

Մեկ այլ շրջադարձային տարբերություն էր Ղուրանի և հադիթի լեզվաբանական ոճը: Երկուսի համեմատությունը ցուցադրում է անհավասարություն, և այն, որ Ղուրանի հեղինակը ամբողջովին տարբեր է հադիթի հեղինակից: Իսկապես գրառվել է, որ արաբները իրենք ապշած էին Ղուրանի լեզվի վրա, որովհետև Մարգարեն մինչ հայտնությունը, հայտնի չէր որևէ գրական ստեղծագործությամբ: Պարզորոշ էր, որ Ղուրանական լեզուն Մուհամմեդի լեզուն չէր: Նույնիսկ ոչ արաբերեն խոսող մարդիկ, ընթերցելով Ղուրանը և հադիթի թարգմանությունները, կարող են տեսնել նրանց ոճային և լեզվական հսկայական տարբերությունները :

Հինգերորդ, Ղուրանի բավական շատ տարբերակներ, ներառում են նախորդ Մարգարեների և նրանց ժողովուրդների պատմությունները: Որպես եզրակացություն, միշտ, նշվում է, որ Մարգարեն չունեն այս պատմական իրադարձությունների և պատմությունների նախնական գիտելիքներ և որ նա իմանում էր դրանց մասին հայտնությունների միջոցով.

- Մովսեսի և Փարավոնի պատմությունից հետո Ղուրանը ասում է. «**Ղու, այնտեղ չէիր, օվ Մարգարե, Թուր լեռան արևմտյան հատվածում, երբ Նա Մովսեսին տվեց Պատվիրանները: Ոչ էլ դու Իսրայելի Չավակների մեջ էիր, ովքեր վկայեցին այս իրադարձությունը: Բացի այդ, Մենք Մովսեսից հետո բերեցինք շատ սերունդներ, այնպես որ կյանքի տևողության վրիպումները, որոնք ձգվել էին նրանց մեջ այնքան աճեց, մինչ նրանք մոռացան Աստծո Դաշինքը: Ավելին, դու այնտեղ չէիր, Մովսեսի հետ, երբ նա բնակվում էր Միդիանի մարդկանց միջև, փոխանցելով Մեր ուղերձը նրանց....» (28:44-45)**
- Հիսուսի և Մարիամի պատմությունից հետո, Ղուրանը նույնպես ասում է. «**Այս հաշիվ է որևէ բանի, որը վեր է ձեր ընկալումից, որը Մենք այժմ լուսաբանում ենք քեզ. Քանի որ դու նրանց հետ չէիր, երբ նրանք վիճում էին, թե նրանցից ով պետք է լինի Մարիամի խնամակալ և դու**

**նրանց հետ չէիր, երբ նրանք պնդում էին միմյանց այդ մասին:» (3:44)**

- **Հովսեփի պատմությունից հետո, այն նույնպես ասում է. «Այս, անցյալի անտեսանելիի ավետիս է, որ Մենք լուսաբանում ենք քեզ, օվ Մարգարե:Քանի որ դու նրանց հետո չէիր, երբ նրանք վճռեցին իրագործել իրենց չարիքը և երբ նրանք իրագործում էին այդ:» (12:102)**

Վերոհիշյալ տարբերակները սովորաբար հայտնվում էին Ղուրանի պատմություններից հետո: Ուստի, եթե Մարգարեն իմանար այս պատմությունները Հրեաներից և Քրիստոնյաներից, ինչու՞ նա պետք է վերգրեր դրանք Աստծոն: Արդյո՞ք նա այսպիսի բացահայտ ստախոս էր:

Վեցերորդ, Ղուրանը խստորեն քննադատում է Մարգարեյին որոշ խնդիրներում.

- Մեկ անգամ մարգարեն նստած էր Քուրեյշ ցեղի ղեկավարների հետ, հրավիրելով նրանց առ Իսլամ: Մի կույր, Աբդուլահ իբն Ումմ Մաքթումը, ով արդեն մահմեդական էր, եկավ Մարգարեյի մոտ հարցնելու որոշ բաներ Իսլամի մասին: Մարգարեն արհամարհեց նրան, քանի որ նա զբաղված էր տալով Իսլամի ուղերձը Քուրեյշ ցեղի ղեկավարներին, հույս ունենալով, որ նրանք կընդունեն այդ: Անմիջապես դրանից հետո, հայտնություն իջավ

նախատելու և հանդիմանելու նրան. **«Նա խոժոռովեց և շրջվեց, որովհետև կույր մարդը մոտեցավ նրան: Մակայն, բոլորի համար դու գիտեյիր, օվ Մուհամմեդ, որ միգուցե նա աճել էր մաքրությամբ:»** (80:1-3)

- Մարգարեն սիրում էր ուտել մեղր: Մեկ անգամ նա մերժեց սպառել մեղր, այն բանից հետո, երբ նրա կանայք հուսալքեցին նրան անել այդ, որպես արդյուք նրանց միջև տեղի ունեցած վեճի: Աստված կրկին նախատեց և հանդիմանեց նրան. **«Օվ, Մարգարե, Ինչու՞ դու, մեծ ցանկությամբ գոհացնել քո կանանցից մեկին կամ մյուսին, հարկադրում ես քեզ արգելել մի բան, որը Աստված թույլատրելի է դարձրել քեզ համար:»** (66:1)
- Թարուկ ճակատամարտի ժամանակ, որոշ փարիսեցիներ եկան և թույլտվություն խնդրեցին Մարգարեյից, արշավին մասնակցություն չունենալ: Գթասիրտ Մարգարեն ընդունեց նրանց արդարացումը: Դրանից անմիջապես հետո, հայտնություն իջավ նրան, որը կրկին նախատում և հանդիմանում էր. **«Թող Աստված ների քեզ, օվ Մարգարե: Ինչու՞ դու թույլտվություն պարզեցիր նրանց մնալ տանը, մինչ այդ ակնհայտ էր քեզ, թե ով էր ասում ճշմարտություն, մինչ դու իմացար, թե ովքեր են խաբեբաները:»** (9:43)

Գոյություն ունեն շատ այլ դեպքեր, որտեղ Աստված նախատում և հանդիմանում է Մարգարեյին: Տրամաբանական հարց է ծագում, թե ինչու է Մարգարեն հորինել այս տարբերակները: Նույնիսկ, եթե որևէ մեկը լուսաբաներ այս տարբերակները նրան, ինչու նա պետք է պահպաներ դրանք, հաստատուն հավատալով, որ այս տարբերակները կընթերցվեն և կարտաբերվեն դարեր: Փաստացի և տրամաբանական պատասխանն է, որ այս Մարգարեյի խոսքերը չեն և որ նա Ղուրանի հեղինակը չէ:

Յոթերորդ, Ղուրանի ամենամեծ թեման այն է, որ նրա աղբյուրը Ինքն Աստվածն է: Մարգարեն չուներ որևէ իրավունք ավելացնել կամ պակասեցնել հայտնությունից:

**«Եթե նա, Մուհամմեդը, փորձեր վերագրել Մեզ իր իսկ ասածներից որևէ բան, Մենք, իրոք կբռնեյին նրան իր աջ ձեռքից և իրոք, կկտրեյինք նրա կյանքի երակը:»**  
(69:44-46)

Եթե Մարգարեն իրոք Ղուրանի հեղինակն էր, ապա ինչու նա պետք է ասեր այս խոսքերը: Արդյո՞ք նա կատարյալ ստախոս էր, այնքանով, որ և պատրաստեր Ղուրանը և սպառնար իր իսկ դեմ: Պատմությունը և տրամաբանությունը հերքում են այս հայտարարությունը, մանավանդ այն պարագայում, որ Մարգարեն հայտնի էր որպես չափազանց ազնիվ, ով երբեք ոչ մի սուտ չէր ասել իր ամբողջ կյանքի

ընթացքում: Մարգարեության դեմ նույնիսկ հեթանոս կռապաշտները վկայում են նրա ճշմարտացիությունը և նա հայտնի էր որպես 'Վստահելի' և 'Ճշմարտախոս': Արդյո՞ք մենք պետք է հավատանք, որ հանկարծակի, քառասուն տարեկան հասակում, Մարգարեն ոչ միայն սկսեց ասել ստերի երկար շարան, այլև, որ այդ ստերը դեմ էին Աստծոն : Պարզապես անտրամաբանական է:

## ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ

Մեղադրանքը, որ Մարգարեն գրագողություն է արել Աստվածաշնչից անհիմն է ըստ հետևյալ պատճառների.

Առաջին հերթին, Ղուրանի մեջ գոյություն ունեն հարյուրավոր հղումներ, որոնք ուղղված են անցյալի դեպքերին, որոնք տեղ չեն գտել Աստվածաշնչի մեջ: Օրինակ, Ադամի մեղանչելը Դրախտում և Աստծո ընդունելը, որը էականորեն հերքում է բնածին մեղքի Քրիստոնեական գաղափարի հիմքը: Ղուրանը նույնպես նշում է Մարգարեների հետ կապված տարբեր իրադարձություններ, ինչպիսիք են Աբրահամին կրակին հանձնելը և որ նրան փրկել է միայն Աստված և Աբրահամի սուրբ վայրի կառուցելը, որը Մեքքայում գտնվող Քաբբան էր: Այն նույնպես պատմում է Նոյի և Հիսուսի պատմությունների շատ վճռական դրվագներ, որոնցից մի քանիսը ամբողջովին հակասում են Աստվածաշնչյան կարծիքին: Որտեղի՞ց է Մուհամմեդը ստացել այս ամբողջ տեղեկությունը: Անկասկած այդ չէր կարող Աստվածաշունչը լինել: Ինչպե՞ս կարող է

որևէ մեկը ողջամտորեն վիճել, որ նա գրագողություն է արել Աստվածաշնչից:

Ինչ վերաբերում է այն մեղադրանքին, որ նա սովորել է ամբողջ Ղուրանը Բահիրա անունով վանականից, այն կարող է համարվել անհեթեթ, ամենաքիչը երկու պատճառներով:

Առաջինը, Մարգարեյի և վանականի հանդիպումը եղել է մի քանի կարճ ընդհանրություններ և երբ Մարգարեն միայն տասներկու տարեկան էր :Վանականը հրավիրեց Սիրիայի ճանապարհ գնացող քարավանը ճաշի, որով ճանապարհորդում էր Մարգարեն: Մարգարեյի համար աներևակայելի կլինեք սովորել այն, ինչի կարիքը ուներ Բահիրայից, կարճ հանդիպման ընթացքում: Ավելին, գոյություն չունի որևէ պատմական արձանագրություն, որ նա Բահիրայից սովորել է Աստվածաշունչը, չնայած այն բանի որ, գոյություն ունեն վանականի արձանագրությունները Մուհամմեդի մարգարեության մասին, որը նա իմացել է Հրեա-Քրիստոնեական գրերից:

Երկրորդ, Ղուրանի հասկայական տարբերակներ, որոնք են Գլուխ 5,8,9,24,33,48 և այլն, կապված են քաղաքական և հասարակական խնդիրների հետ, որոնց Մարգարեն առերեսել է Մեդինայում, տասնյակ տարիներ անց: Ինչպե՞ս կարող էր Բահիրան նրան թելադրել այս գլուխները: Երկյուղ է առաջացնում այն, որ այսպիսի փաստարկը նախորդել է Ֆրանսիացի

հեղինակը, ով մեղադրում է, որ Մարգարեն սովորել է ամբողջ Ղուրանը Բահիրայից մեկ, կարճ հանդիպման ընթացքում:

Ինչպես մենք նշեցինք, շատ մեղադրանքներ կան, որ Մարգարեն Ղուրանի շատ պատմական հղումներ, սովորել է Քրիստոնյաներից կամ Հրեաներից, ովքեր ապրել են նրա օրոք: Այսպիսի մի փաստարկ ասում է, որ ապրում էին երկու Քրիստոնյա միսիոներներ, ովքեր կարող էին այցելել Մեքքա տարեկան տոնավաճառների ընթացքում, որոնցից Մարգարեն կարող էր ստանալ գիտելիքը: Ամեն դեպքում, այս Քրիստոնյաները մահկանացուն են կնքել Մարգարեյից շատ ավելի վաղ, և այսպիսով հնարավոր չէր, որ նրանք սովորեցնեին նրան:

## ԱՐՅՈ՞Ք ՄԱՐԳԱՐԵՆ ԱՌԱՋՆՈՐԴԵՑ ԲԱԶՄԱԹԻՎ ԲԱՐԲԱՐՈՍ և ԱՐՅՈՒՆԱԼԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

Մարգարե Մուհամմեդը, Գթասրտության Մարգարեն, չէր պատվիրում պատերազմ, որպես գործերի բնական վիճակ և միևնույն ժամանակ, պատերազմը չէր կարող պարզապես վերացվել: Ինչ ցանկացած բարեփոխիչ կամ հոգևոր առաջնորդ կարող է անել, այն է նվազեցնել դաժանությունը: Գթասրտության Մարգարեն, ըստ Աստծո ուղղորդության, փորձեց հաստատել պատերազմական կանոններ, որոնք կարող են այդ դարձնել այնքան մարդկային, որքան որ հնարավոր է, որպեսզի խրախուսի խաղաղություն և նվազեցնի մարդկային կյանքերի անիմաստ կորուստը:

Պատերազմի նկատմամբ Մարգարեական մոտեցումը, ավելի լավ կարող է գնահատվել, եթե մենք դիտենք որոշ գործիչների: Գթասրտության Մարգարեն, ստիպված էր շատ անգամներ զենքով պաշտպանել իրեն, և զարմանալիորեն մարդկային կորուստների քանակը ցածր էր, եթե մենք համեմատենք մարդկային պատմության մեջ տեղի ունեցած համապատասխան ճակատամարտները: 28 ճակատամարտների և 38 արշավների ընթացքում, ամբողջական զոհերը, ներառելով երկու կողմերն էլ, հասնում էին մոտավորապես 1284 –ի:

Ումանք կարող են վիճել ասելով, որ զոհերի նվազագույն քանակի պատճառը, տարբեր արշավների մասնակիցների քիչ քանակն էր:

Սակայն մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ պատերազմների ընթացքում զոհված մարդկային կյանքերի տոկոսը հարաբերվում է մասնակիցների քանակին, կազմելով մոտ 1,5 տոկոս: Քանի որ Գթասրտության Մարգարեն այդ ճակատամարտերի մեծամասնության ընթացքում հաղթող էր, զոհերի քանակը նշում է, որ նրան չպետք է դնել մարդկային պատմության բարբարոս և անխիղճ զինվորական գեներալների և նվաճողների շարքերը- և փաստորեն, հեռու էր դրանից:

Համեմատեք վերոհիշյալ թվերը մարդկային պատմության մյուս պատերազմների հետ: Օրինակ միայն Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքում, զոհերի և պատերազմական մասնակիցների հարաբերակցությունը 351%: Այն է 10 600 000 մասնակիցներ այդ պատերազմում, մինչև մարդկային մահացության քանակը ավելի բարձր էր քան 54 800 000:

Հակառակ պատերազմական վայրագությունների, Գթասրտության Մարգարեն պատերազմական վարքագիծ բերեց արմատական փոփոխություններ, սահմանափակելով մյուսների նկատմամբ կատարվող ոտնձգության գործածումը և միջոցները: Այսօրվա նման, Գթասրտության Մարգարեն ապրում է մի

աշխարհում, որի պատերազմական վայրագությունները անկառավարելի էին: Ինչպես այդ ժամանակաշրջանի Հռոմեական և Պարսկական կայսրությունները և մերօրյա կայսրությունները, արաբական ցեղերը ընդդգված էին ճակատամարտերում, որոնք հետապնդում էին նյութական շահեր, ավելի քան բարձր, բարոյական նպատակներ: Ամեն դեպքում Գթասրտության Մարգարեն արմատապես փոփոխեց ամենը :

Գթասրտության Մարգարեն սահմանեց որոշ բարոյական սկզբունքների իրականացում, պատերազմի թոհուրոհի ընթացքում: Առաջինը, նա արմատապես վերասահմանեց պատերազմի հիմնական գաղափարը և հասկացությունը: Ներկայացնելով բոլորովին նոր վերնագիր – ջիհեդ ֆի սաբիլ Ալլահ- նա մաքրեց պատերազմը միայն նյութական կամ շահախնդրական և ինքնաձառայման դրդապատճառներից: Ջիհեդ նշանակում է «պայքար» և մեկը, ով որոշակի ջանքեր է գործադրում հեռացնելու անարդարությունը և մյուսների կողմից արված կեղեքումները: Ավելացնելով «Ալլահի ուղղու մեջ” ֆի սաբիլ Ալլահ, նա սովորեցրեց, որ չպետք է սանձազերծել պատերազմ հանուն ինչ որ մեկի, կամ ավարի, հպարտության, հեղինակության, նվաճման կամ ուրիշ մարդկանց կեղեքելու համար: Այս համոզմունքը միացնում է պատերազմական սկզբունքները և սանձում

է բոլոր հնարավոր անարդարությունները, որոնք բնորոշ են դրան:»

Պատերազմի այսպիսի նոր գաղափարախոսության ներքո, Գթասրտության Մարգարեն ներկայացրեց օրենքների սպառիչ հավաքածու, որը պարփակեց պատերազմի վարքը, նրա բարոյական սահմանները, բաղադրիչները, իրավունքները և պարտավորվածությունները, տարբերությունները զինվորների և քաղաքացիների և նրանց իրավունքների և պատերազմական բանտարկյալների և պատվիրակների և նվաճված մարդկանց միջև: Այս բոլոր սկզբունքները պարզորեն և միանշանակ արտահայտել է Գթասրտության Մարգարեն:

Գթասրտության Մարգարեն նաև ընդգծեց մարդկային կյանքի և անձեռնմխության սրբությունը, լինի նա մահմեդական, թե ոչ: Նա մարմնավորեց Ղուրանական տարբերակը. **«Եթե որևէ մեկը սպանում է մարդկային արարած, բացառությամբ այն դեպքերի եթե այդ պատիժ է սպանության կամ երկրի վրա կոռուպցիայի տարածման, այն կլինի կարծես, նա սպանել է ամբողջ մարդկությունը:»** (5:32) Այս աստվածային հրահանգի միջոցով, Գթասրտության Մարգարեն մաքրագրեց պատերազմը ամեն տեսակի անձնական դրդումներից և ստորադաս նպատակներից: Նրա հետևորդները, թեև նրանք անշուշտ եղել են և մինչ այժմ են – հակված են մեծ սխալների, բայց ընդհանուր առմամբ այս սկզբունքների ուշագրավ օրինակ են:

Գթասրտության Մարգարեն արգելեց կողոպուտը, ավազակությունը և բարարոսությունը, որոնք եղել էին նրանից առաջ տեղի ունեցող պատերազմների ընթացքում: Օրինակ, Խայբարի խաղաղության պայմանագրի կնքումից հետո, որոշ նոր, երիտասարդ մահմեդականներ, սկսեցին փնտրել հրեաների ունեցվածքները: Հրեա ղեկավարները եկան Գթասրտության Մարգարեյի մոտ և ասացին. «Արդյո՞ք սազական է քո ժողովրդին մորթել մեր ավանակները, վնասել բերքը և ձեռք բարձրացնել մեր կանանց վրա:» Հանկարծակի, Գթասրտության Մարգարեն կանչեց ամբողջ բանակը մզկիթ աղոթելու և ասաց նրանց. «Ալլահը չի թույլատրում ձեզ մտնել Գրքերի Մարդկանց տները առանց թույլտվության և ձեռք բարձրացնել նրանց կանանց վրա և ուտել իրենց բերքը:» Եթե ճանապարհին զինվորները գտնում են կենդանի, որին կարելի է կթել, նրանք չեն կարող այդ անել առանց թույլտվության: Հետևաբար, նույնիսկ պատերազմի ընթացքում, Գթասրտության Մարգարեն սահմանեց օրենքի կանոնի կարևորությունը և հարգանքը ունեցվածքի և մյուսների իրավունքների նկատմամբ, որը ավելի հեռու է, քան մենք կարող ենք տեսնել ժամանակակից պատերազմների ընթացքում:

Անցյալում, բանակները ավիրում էին բերքը, արոտավայրերը, ունեցվածքները և նույնիսկ ամբողջ գյուղերը: Սակայն, Գթասրտության Մարգարեն արգելեց ոչ մարտիկների, այսինքն, կանանց,

